ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ «Տարբերակված առաջադրանքների կիրառումը որպես դասի արդյունավետությունը բարձրացնող միջոց»

Կազմեց՝ Տաթևիկ Գևորգյան

ՀՀ Սյունիքի մարզի Ձագիկավանի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Գրիգորյան

Կապանի N2 ավագ դպրոց՝ ՊՈԱԿ

Վերապատրաստող կազմակերպության անվանում

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն — 2-3
2. Հետազատական համատեքստ — 4-5
3. Գործնական համատեքստ — 6-7
4. Հետազոտական ընթացք — 8-9
5. Տվյալների մշակում և վերլուծություն — 10-11
6. Եզրակացություն — 12
7. Գրականության ցանկ — 13
8. Հավելված — 14-24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից դպրոցում ուսուցչի արդյունավետ աշխատանքը հնարավոր է դառնում նաև ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելու, ուսուցման ժամանակակից մեթոդները հմտորեն կիրառելու միջոցով: Մեր օրերում գիտության առաջընթացը պահանջում է գիտելիքներով ու կարողություններով զինված քաղաքացի, իսկ դպրոցն այն հիմնական օղակն է, որտեղ ձևավորվում է այդ քաղաքացին : Որքան էլ գնահատելի և կիրառելի է անցյալի փորձը, այնուհանդերձ, ավանդական դասերն այլևս բավարար չեն սովորեցնելու բոլոր աշակերտներին, սովորեցնելու յուրաքանչյուրին, սովորեցնելու նորովի՝ ժամանակի պահանջներին համապատասխան; Յուրաքանչյուր դասարան առանձնահատուկ է՝ դասարանում ընդգրկված սովորողների պատրաստվածության աստիճանով, նրանց ընդունակություններով, հետաքրքրությունների շրջանակով, ուսումնառության տարբեր ոճերով: Արդի կրթական համակարգում սովորողն իր պահանջմունքներով, հետաքրքրություններով և ձեռք բերած փորձով դառնում է կրթական գործընթացի ակտիվ մասնակից:

Դասերը միատեսակ չեն կարող լինել՝ նույնիսկ ամենամեծ ցանկության դեպքում: Յուրաքանչյուր դաս ինքնին տարբեր է: Մեկ դասի ընթացքում կամ մեկ դասարանում կիրառված մեթոդը, հնարը բոլորովին այլ է ստացվում մի ուրիշ դասի ընթացքում կամ այլ դասարանում: Ամեն անգամ դաս պլանավորելիս՝ անհրաժեշտություն է առաջանում նոր մոտեցում ցուցաբերելու՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դասարանի և յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները, անհատականությունը, նրանց բազմազանությունը: Այս է պատճառը, որ դասավանդման մեթոդներն ու հնարները անհրաժեշտ է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման արդյունավետությունը պետք է տեսնի ուսուցիչը: ՈՒսուցչի գործունեության ողջ ընթացքում չեն ավարտվում շարունակական պրպտումները, թե ինչպե՞ս կարելի է դասն ավելի հետաքրքիր դարձնել , ինչպե՞ս կարելի է պահպանել սովորողների կայուն հետաքրքրությունը ուսման նկատմամբ և ինչպե՞ս ապահովել դասարանի բոլոր սովորողների առաջադիմության աճը: Իմ կարծիքով ուսուցիչը հնարավորություն ունի հասնելու այս ամենին տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառման արդյունքում:

Յուրաքանչյուր սովորողի կամ սովորողների որոշ խմբի առաջադիմության աճ ունենալու համար այլևս ճիշտ չէ ուսուցումն իրականացնել՝ հենվելով միջին կարողություններ ունեցող սովորողների վրա:Սա արհեստականորեն դանդաղեցնում է ուժեղ սովորողների առաջընթացը, նրանք կորցում են մոտիվացիան, իսկ թույլ սովորողներին թվում է, թե նրանք ոչինչ չեն կարող սովորել:Այս խնդրի համար լուծում կարող է լինել, որ ուսուցիչը յուրաքանչյուր սովորողի հնարավորություն տա ծրագրային նյութը յուրացնել իր կարողությունների սահմաններում:Մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ ուսուցիչը նույն առաջադրանքը հանձնարարելով ամբողջ դասարանին, չի կարող բոլորից նույն արդյունքը ակնկալել:Կարևոր է, որ նա ձեռքի տակ ունենա բազմաբնույթ ու բազմաշերտ առաջադրանքներ, ինչը կօգնի իրականացնելու տարբերակված ուսուցում:Այստեղ անչափ կարևոր է մի սկզբունք, որ տարբերակված ուսուցումը չպետք է պատճառ դառնա պիտակավորելու որևէ սովորողի:

Հետազոտական համատեքստ

Տարբերակված դասավանդումը սովորողների կարիքների և նախասիրությունների վրա կառուցված դասավանդումն է:

Մերօրյա դպրոցում խնդիր է մոտիվացիայի պակասը, և տարբերակված ուսուցումը հնարավորություն կտա բարձրացնել սովորողների մոտիվացիան՝ նրանց համար ստեղծելով ինտելեկտուալ զարգացման հնարավորություն:Քանի որ տարբերակված ուսուցումը հնարավորություն է ընձեռնում յուրաքանչյուր սովորողի սովորել իր ունակություններին համապատասխան, տալիս է գործողությունների ընտրության որոշակի ինքնուրույնություն, հենց դա էլ կարող է ստիպել սովորողին հետաքրքրվել մատուցվող նյութով:Չկան բացարձակ անկարող սովորողներ, պարզապես անհրաժեշտ է բացահայտել նրանց ուժեղ կողմերը և նրանց սուսուցումը կազմակերպել՝ հիմնվելով ուժեղ կողմերի վրա:

Տարբերակված ուսուցման նպատակը ոչ միայն թույլ կարողություններ ունեցող սովորողների կրթական կարիքների ապահովումն է, այլ նաև ավելի մեծ ընդունակություններ և հետաքրքրությունների լայն շրջանակ ունեցող, բարձր առաջադիմություն ցուցաբերող սովորողների համար հնարավորությունների ստեղծումն է:

Հայտնի է, որ դասարանները կազմավորվում են ըստ սովորողների տարիքի, բայց նրանց միատարիք լինելը չի ենթադրում զարգացման և պատրաստականության միևնույն աստիճան:Հաճախ ուսուցիչը ուսումնական գործունեության ընթացքում՝ դասի ժամանակ դժվարանում է որևէ առաջընթաց գրանցել, քանի որ սովորողների միջև առկա են մեծ տարբերություններ, որոնք էլ պայմանավորված են մի շարք հանգամանքներով:Նախ սովորողներն ունենում են տարբեր նախնական գիտելիքներ տվյալ առարկայից, տարբեր կարողություններ, արժեքային համակարգ, բառապաշար, ինչպես նաև՝ ընկալման, ուշադրության կենտրոնացման, լեզվի. մտածողության, հիշողության տարբերություններ:Պակաս կարևոր տարբերություն

չի նաև, թե ինչ ընտանիքից է սովորողը, սոցիալ-հուզական ինչ պայմաններում է ապրում:

Տարբերակված ուսուցում իրականացնելիս ուսուցչի խնդիրն է ուսումնասիրել սովորողների անհատական առանձնահատկությունները, նրանց մեջ սովորելու նկատմամբ հետաքրքրություն և գիտելիքների բացերը լրացնելու ցանկություն առաջացնելը:Ցանկալի արդյունքի հասնելու համար կարևոր է նշել սովորողների անգամ ամենափոքր հաջողություններն ու ձեռքբերումները, բացատրել նրանց հետ մնալու պատճառները և միասին գտնել դժվարությունները հաղթահարելու ուղիներ:Միայն իր առաջընթացը, նույնիսկ աննշան հաջողությունը զգալը կմղի սովորողին ավելի լավ աշխատելու:

Տարբերակված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը:Ուսուցման անհատականացումն ու տարբերակումը նպաստում է անհատի մտավոր, բարոյական, հուզական և ֆիզիկական զարգացմանը, հնարավորություն է ընձեռում լիովին բացահայտել սովորողի մտավոր կարողությունները, հոգեբանական առանձնահատկությունները:

Այս ուսումնական գործընթացում ուսուցչի խնդիրն է ոչ թե սովորողին հարմարեցնել ուսումնական նյութին, այլ ուսումնական նյութը հասանելի ու մատչելի դարձնել յուրաքանչյուր սովորողի համար:Այս մոտեցումը հնարավորություն կտա դասին բոլոր սովորողների ակտիվ մասնակցության, յուրաքանչյուրը կունենա իր անելիքը, իրեն տրված դժվարությունը կլինի հաղթահարելի:Իրենց ընդունակություններին, կարողություններին ու հմտություններին համապատասխան հանձնարարությունների, իրենց համար հաղթահարելի բարդության և ծավալի առաջադրանքների կատարումը կբարձրացնի սովորողների ինքնագնահատականը, ուսման հանդեպ հետաքրքրությունն ու խանդավառությունը:

Գործնական համատեքստ

Տարբերակված ուսուցման հաջողությունը կախված է գործընթացի ճիշտ կազմակերպումից:Դասարաններում ընդգրկված են տարբեր կարողություններով օժտված երեխաներ, ուստի տարբերակված ուսուցում կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ տարբեր են սովորողների՝

-սովորելու ոճը

-մղումը

-վերաբերմունքը

-հետաքրքրությունները

-ուղեղի կիսագնդերի դոմինանտությունը

-սեռը

Տարբերակված ուսուցման եղանակները կախված են առարկայի բովանդակությունից, առարկայի ծրագրային, չափորոշչային պահանջներից, սովորողների անհատական կարիքներից:Պետք է հաշվի առնել նաև սովորողների առանձնահատկությունները՝ հումանիտար, երաժշտական, կինեստետիկ, լսողական, տեսողական և այլն:Ուսումնական նույն նյութը անհրաժեշտ է տեսողական առանձնահատկություններ ունեցողին տրամադրել նյութը բացատրող տեսադասերի ձևով, լսողականին՝ աուդիոդասագրքերի, կինեստետիկին՝ առցանց ինտերակտիվ հանձնարարության, ընթերցողականին՝ տրամադրել դասագրքեր և այլ գրականություն:

Տարբերակված ուսուցման ժամանակ յուրաքանչյուր սովորող կարող է ունենալ իր նվաճումների գրանցամատյանը, ինքնագնահատման ռուբրիկը, որտեղ ինքը կգնահատի իր գիտելիքները, հմտությունները և հնարավորություն կունենա համեմատել այն ուսուցչի գնահատականի հետ: Ինքնագնահատումը թույլ կտա սովորողին գնահատել իր սկզբանական արդյունքները ձեռք բերած նոր արդյունքների հետ: (forum.armedu.am)

Անշուշտ դյուրին չէ կազմակերպել տարբերակված ուսուցում, թեկուզ հենց այն առումով, որ նման դասերի պլանավորումը աշխատատար է և պահանջում է երկար ժամանակ:

Տարբերակված ուսուցում պլանավորելիս և իրականացնելիս կարևոր է պահպանել հիմնական 3 փուլերը՝

1.Ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձահատկությունները, անցկացնել չափորոշիչներին համապատասխան հայտորոշում

2.ըստ հայտորոշման արդյունքերի՝ խմբավորել աշակերտներին

3.տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Ուսուցչից պահանջվում է նաև սովորողի անձի զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծում, որը ենթադրում է՝

-հաղորդակցություն, ժողովրդավարական, հարգալից ոճ

-բոլորի ակտիվ մասնակցություն՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական առանձնահատկությունները, գիտելիքներն ու փորձառությունը

-աջակցող, խրախուսող, բարյացակամ մթնոլորտ՝ յուրաքանչյուրի համար հաջողության հասնելու հնարավորություններով

-գիտելիքներ ու կարողություններ ձեռք բերելու դրդապատճառների ապահովում [4, էջ 14]:

Ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է այն բանից, թե ով է սովորողը և ինչպես է իրեն պահում ուսումնական գործընթացում:Մանուկ Մկրտչյանի «Ուսուցման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը» մենագրության մեջ ձևակերպում են ուսուցման կանխադրույթները.

Առաջին՝ յուրաքանչյուր առողջ երեխա ի վիճակի է յուրացնել ցանկացած ուսումնական նյութ:

Երկրորդ՝ երեխաները միմյանցից տարբերվում են ոչ թե այս կամ այն նյութը յուրացնելու իրենց հնարավորություններով, այլ այդ նյութը յուրացնելու իրենց անհատակն ձևով և միջոցներով:

Երրորդ՝ աշակերտի հետաքրքրությունը ուսումնասիրվող նյութի նկատմամբ որոշվում է ոչ թե այդ նյութի բովանդակությամբ, այլ այդ նյութի յուրացման գործընթացում աշակերտի գործողությունների հաջորդականությամբ [1, էջ 47]:

Տարբերակված ուսուցման հիմքում ընկած է անհատական մոտեցման սկզբունքը:Այն հնարավորություն է տալիս ամբողջովին հարմարեցնել բովանդակությունը, մեթոդները և սովորողի ուսումնական գործունեության տեմպը, հետևել չիմացությունից իմացության անցմանը, ուսումնական գործունեության մեջ ժամանակին կատարել անհրաժեշտ ուղղումներ:

Հետազոտական ընթացք

Տարբերակված ուսուցման ժամանակ հնարավորություն ունենք կիրառել տարբեր ռազմավարություններ: Կարելի է տարբերակում իրականացնել ըստ առաջադրանքների, ըստ ռեսուրսի, ըստ ժամանակի, ըստ օժանդակության և ըստ արդյունքի ՝ դրանցից ամեն մեկը կիրառելով առանձին-առանձին կամ մի քանիսը միաժամանակ:Քանի որ տարբերակված ուսուցում իրակացնելիս նախ ուսումնասիրվում է սովորողի անհատական առանձնահատկությունները, այնուհետև խմբավորվում են սովորողներն ըստ իրենց անհատական առանձնահատկությունների, և տարբերակվում է խմբի ուսումնական գործընթացը, նպատակահարմար է, որ ամեն ուսուցիչ ինքը որոշի սովորողների խմբերի ընտրության սկզբունքը:

Ես տարբերակված ուսուցումը փորձնական նպատակով կիրառեցի 5-րդ դասարանում՝ մայրենի առարկայից: Նախնական հայտորոշման արդյունքում աշակերտներին բաժանեցի պայմանական խմբերի(խմբերը մշտական չեն, և դրանց կազմերը կարող են փոփոխվել ըստ անհրաժեշտության):Առաջին խմբում ընդգրկվեցին նրանք, ովքեր հիմնականում կարողանում են կարճ ժամանակում հաղթահարել իրենց տրված առաջադրանքը և օգնություն ցույց տալ ուրիշներին, երկրորդ խմբում ընդգրկված սովորողները կարողանում են ինքնուրույն հաղթահարել տրված հանձարարությունը, իսկ երրորդ խմբում ընդգրկվածները մշտական լրացուցիչ օգնություն պահանջող սովորողներն են:Այնուհետև կատարեցի տրվող առաջադրանքերի տարբերակում՝ ըստ դրանց կատարման բարդության աստիճանի;Ամենապարզ առաջադրանքը տրվեց երրորդ խմբին՝ կարդալ ուսումնական նյութը, փորձել վերարտադրել հիմնական բովանդակությունը՝ առանձնացնելով գլխավոր միտքը, երկրորդ խմբի սովորողներին հանձնարարվեց կարդալ ուսումնական նյութը, կազմել պլան 4 հարցադրումներով, առաջին խմբին՝ կարդալ ուսումնական նյութը, տալ նյութի համառոտ բնութագրությունը, արտահայտել սեփական դիրքորոշումը:

Կատարելով անդրադարձ սովորողների ցուցաբերած արդյունքերին՝ կարողացա առանձնացնել գիտելիքի յուրացման երեք մակարդակ՝

ա)Բարձր մակարդակ- լիարժեք յուրացրել է նյութը,կիրառում է անծանոթ իրավիճակներում, կիրառում է քննադատական և ստեղծագործական հմտություններ:

բ)Միջին մակարդակ- յուրացրել է նյութը, կիրառում է ծանոթ իրավիճակներում, անում է եզրակացություններ:

գ)Նվազագույն մակարդակ- հասկացալ է նյութը, մտապահում է, վերարտադրում է:

Այնուհետև ապահովեցի հետադարձ կապ. Ուսումնական նյութը լիարժեք յուրացրած սովորողներին տրվեց հնարավորություն գիտելիքների խորացման ու ընդլայման համար:Ուսումնական նյութի լիարժեք յուրացման հարցում դժվարությունների հանդիպած սովորողների համար մշակեցի համապատասխան առաջադրանքներ: Երրորդ խմբի սովորողներին օգնելու հարցում շատ արդյունավետ է օգնական աշակերտների դերը, ովքեր նշանակվում էին առաջին կամ երկրորդ խմբերից:

Տարբերակված ուսուցում իրականցնելիս դժվար է ակնկալել լիարժեք արդյունք, եթե տարբերակումը իրականացնում ենք միայն դպրոցում:Հնարավոր լավագույն արդյունքը ստանալու համար անհրաժեշտ է տարբերակել նաև տնային աշխատանքը, ինչը սովորողների ուսումնական գործունեությունն է, որը նրանք պիտի կատարեն ինքնուրույն:Քանի որ տնային աշխատանքը, ըստ էության, ինքնակրթության մի ձև է, ուստի պիտի լինի սովորողի համար մատչելի, համապատասխանի նրա գիտելիքներին ու կարողություններին:Տարբերակված ուսուցումը կիրառելիս՝ սովորողներին հանձարարեցի տարբերակված տնային աշխատանքեր՝ համապատասխան նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկություններին:Ցածր պատրաստվածություն ունեցողներին տրվեցին այնպիսի առաջադրանքներ, որոնք ավելի պարզ էին, պարունակում էին ավելի քիչ տեղեկություններ, ավելի շատ նկարներ ու ցուցադրումներ:

Միջին կարողություններ ունեցող սովորողներին՝ իրենց կարողություններին համապատասխան, իսկ բարձր կարողություններ ունեցող սովորողների առաջադրանքները ավելի բարդ էին, համընդգրկուն, մեծ ծավալով:

Առաջադրանքներ կազմելիս չեն անտեսվել նաև ուսումնառության ոճերը՝

ընթերցողական - նյութի, թեմայի վերլուծություն

տեսողական - սահիկաշար, պաստառ

երաժշտական - ունկնդրում

լսողական - բանավոր

Տվյալների մշակում և վերլուծություն

Սովորողներին տրվեց երկու հայտորոշիչ թեստ, որոնց արդյունքներն ամփոփվեցին ըստ առաջադրանքների կատարման 50% և ավելի կատարված լինելու:

Ըստ հետազոտության արդյունքների 5-րդ դասարանում հայտորոշիչ 1- ին թեստի առաջադրանքների
50% և ավելի հաղթահարել է 10 աշակերտ կամ սովորողների 62.5%-ը:

Հայտորոշիչ 2-րդ թեստի արդյունքները՝ 50% և ավելի հաղթահարել է 13 աշակերտ կամ սովորողների
81,25%-ը:

Հայտորոշիչ թեստ 1 և հայտորոշիչ թեստ 2
արդյունքների վերլուծություն



Սովորողներին տրվեցին նաև հարցաթերթիկներ, որոնց արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ նրանց մեծ մասը գերադասում է տարբերակված առաջադրանքներով ուսուցումը:



Եզրակացություն

Ամփոփելով ստացված արդյունքները՝ կարելի է ասել, որ տարբերակված ուսուցումը գործնականում շատ աշխատատար, բավականին դժվար կիրառվող ուսուցման ձև է, որը պահանջում է մանկավարժական հմտություններ, փորձ, պատրաստվածություն, համբերություն, ցանկություն և ժամանակ, սակայն արդյունավետ է, նպաստում է սովորողների մոտիվացիայի և առաջադիմության բարձրացմանը: Փորձնական նպատակով 5-րդ դասարանում կիրառելով տարբերակված ուսուցումը՝ ունեցա ոչ միայն տեսանելի արդյունք այլ նաև սովորողների հետաքրքրության զգալի աճ ուսումնական գործընթացի և ուսումնասիրվող առարկայի նկատմամբ: Իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան առաջադրանքների կատարումն ու հաղթահարումը սովորողների մոտ առաջացրեց նաև ակտիվություն դասաժամերին. նույնիսկ այն սովորողները լիարժեք ընդգրկվեցին դասապրոցեսում, ովքեր նախկինում պասիվ էին, անտարբեր, չէին մասնակցում դասին կամ մասնակցում էին մասամբ: Ուսուցման այս ձևն արդյունավետ էր ոչ միայն թույլ, այլև օժտված սովորողների համար:

Ամփոփելով հետազոտությունս՝ կարող եմ եզրակացնել, որ սովորողների մոտ առաջադիմության աճ կգրանցվի այն դեպքում, երբ դասը հետաքրքրաշարժ, բովանդակալից մատչելի ու հասանելի լինի դասարանի յուրաքանչյուր սովորողի համար: Հետևաբար ժամանակակից կրթական համակարգում շատ կարևոր դեր ունի տարբերակված ուսուցումը:

Գրականության ցանկ

1. Մկրտչյան Մ. Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը: Երևան, հեղինակային հրատարակչություն, 2011, 140 էջ:
2. 101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար : Բուդապեշտ, 2006, 63 էջ:
3. Խաչատրյան Ս.: ՈՒսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
4. Աստվածատրյան Մ.,; Ավագյան Մ.: Թերզյան Գ.:Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ: Երևան, 2014, 84 էջ:
5. Մանկավարժական միտք 117, Զանգակ, 2013:
6. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա.: Մանկավարժություն , Մանկավարժ 2005:
7. forum.armedu.am

Հավելված
Դասի պլան 1

Դասարան	5-րդ
Դասի տևողությունը	45 րոպե
Առարկա	Մայրենի
Թեմա	«Ոսկի արտ» հեքիաթի կերպարների բնութագիրը:Նախադասություն:
Դասի նպատակը	➢ **Նպաստել** զարգացնելու սովորողների ընթերցելու, հեքիաթի տեքստը հասկանալու հերոսներին բնութագրելու կարողություններ՝ հարստացնելով բառապաշարը տարբեր տեսակի նախադասությունների կիրառմամբ: ➢ Սովորողի մեջ **ձևավորել** տեքստի ուսումնասիրման,մտքերը տարբեր նախադասություններով արտահայտելու և հիմնականն ու երկրորդականը միմյանցից առանձնացնելու կարողություններ: ➢ **Նպաստել** զարգացնելու հեքիաթի հերոսներին ըստ նրանց արարքների բնութագրելու հմտություններ: ➢ **Ձևավորել** ստեղծագործելու , կանխատեսելու կարողություններ: ➢ **Դաստիարակել** ագահությունից, ստախոսությունից զերծ մնալու, ճշմարտախոս, ազնիվ, բարի, մարդասեր լինելու հատկանիշներ:
Խնդիրները	➢ Ընթերցել դադարներով, բնութագրել հերոսներին, կազմել համառոտ և ընդարձակ նախադասություններ,որոշել դրանց բնույթը:
Դասի վերջնարդյունքները	➢ Բնագիրը **կկարդան** անսխալ և արտահայտիչ: ➢ Ստեղծագործաբար **կվերարտադրեն** հեքիաթի բովանդակությունը:

	➢ **Կվերարտադրեն** հեքիաթի բովանդակությունը՝ բնութագրելով և վերլուծելով կերպարները: ➢ **Կնկարագրեն և կներկայացնեն** հերոսներին, նրանց արարքներն ու դրդապատճառները: ➢ **Կկազմեն** կապակցված խոսք՝ կիրառելով համապատասխան լեզվաքերականական նյութը(նաղադասություն):

Ուսումնական նյութեր	«Ոսկի արտ» հեքիաթը, կերպարի բնութագրման գծակարգեր, հեքիաթի փաստերը լուսաբանող թերթիկներ:
Ուսուցման մեթոդներ	«Մտագրոհ», «Խթանող հարցեր», «Բազմանիստ», «Ուղղորդված ընթերցանություն», «Կանխատեսման ուղեցույց»:
Միջառարկայական կապ	Հայոց լեզու Մաթեմատիկա Երաժշտություն Պատմություն
Խաչվող հասկացություններ	Օրինաչափություն Անհատներ և հարաբերություններ Պատճառ և հետևանք Ժամանակ և տարածություն
Դասի տիպը	Համակցված դաս

Դասի ընթացքը	1.Կազմակերպական մաս(2-3 րոպե): 2.Իրականացնել տնային աշխատանքի ստուգում (5-7րոպե): Համակարգված հնարքների կիրառման միջոցով հնարավորինս արագ ստուգել դասարանի բոլոր աշակերտների տնային աշխատանքները՝ բացահայտելով աշակերտների մեծամասնության գիտելիքների աստիրանը, ընդհանուր բացթողումները, շտկել դրանք: 3.Խթանող հարցերի միջոցով ամփոփել նախորդ դասը,իրականացնել կարճ հարցում,գնահատել(ձևավորող): Նոր թեմայի ուսուցումը կազմակերպել ԽԻԿ համակարգով: **Խթանման փուլը** սկսել մտագրոհով:«Հարևան» հիմնաբառով կազմակերպել մտագրոհ: Հարևան բառի վերաբերյալ սովորողներն արտահայտում են իրենց պատկերացումները, և դրանք անմիջապես գրանցվում են գրատախտակին գծված գծապատկերում: 

Այնուհետև սովորողներին հանձնարարել մտագրոհի հետևանքով առաջացած բառերով և «հարևան» բառով կազմել մեկ նախադասություն՝ բնութագրելով հերոսին:

Իմաստի ընկալման փուլում կիրառել «Ուղղորդված ընթերցանություն մեթոդը»:

Դասանյութը բաժանել երեք իմաստային դադարների, հանձնարարել ընթերցել առաջին մասը: Առաջին մասն ավարտելուց և առաջին դադարից հետո սովորողներին ուղղել հարցեր՝ օգտագործելով «Կանխատեսման ուղեցույց» մեթոդը

Այնուհետև անցնել երկրորդ և երրորդ մասերի ընթերցմանը՝ սովորողներին հանձնարարելով յուրաքանչյուր կանգառից հետո լրացնել «Կանխատեսման ուղեցույց»-ի գծապատկերը:

Կանխատեսման ուղեցույց

1.Ի՞նչ է լինելու հետո: ա) բ)	2.Ինչու՞եմ այդպես կարծում ա) բ)
3.Ի՞նչ եղավ ա) բ)	4.Նոր ավարտ հորինի՛ր և վերնագրի՛ր:

Ընթերցումն ավարտելուց հետո կազմակերպել քննարկում և մտքերի փոխանակություն:

Կշռադատման փուլում սովորողներին բաժանել «Լուսաբանե՛ք հեքիաթի փաստերը»

Թերթիկներ

Լուսաբանեք այս հեքիաթի փաստերը

Հեքիաթի վերնագիրը

_____

Հեղինակը _____

Կերպարները

_____

_____

Հեքիաթի գլխավոր միտքը / գաղափարը

_____

_____

Տնային աշխատանք	
Անդրադարձ	

Դասի պլան 2

Դասարանը	5-րդ
Դասի տևողությունը	45 րոպե
Առարկան	Մայրենի
Դասի թեման	«Ջուլիո» պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: Նույնահունչ համանուններ:
Դասի նպատակը	➢ **Նպաստել** հասկանալու պատմվածքի դաստիարակչական նշանակությունը: ➢ **Օգնել** հարստացնելու բառապաշարը, կապակցված խոսքի մեջ ճիշտ կիրառելու բառերի իմաստային տարբեր տեսակները: ➢ **Նպաստել** ճանաչելու նույնահունչ համանունները:
Խնդիրները	➢ Ընթերցել,կատարել տեքստային աշխատանք, տեքստում գտնել և բացատրել նույնահունչ համանունները:
Վերջնարդյունքները	➢ **Կիմանան** տեքստի դաստիարակչական արժեքը: ➢ **Կփոփոխեն** տրված տեքստը, նոր հերոսներ **կավելացնեն** կամ ընդհակառակը՝ **կսեղմեն, կկրճատեն:** ➢ **Կհորինեն** դիպաշար(սյուժե) ունեցող պատմություններ՝ օգտագործելով պլան, նախօրոք մշակված հարցեր և այլն: ➢ **Կկազմեն** նկարագրական խոսք՝ կիրառելով տրված բառերը, բառակապակցությունները, նախադասությունները: ➢ **Կգնահատեն** հերոսների վարքագիծը և **կարտահայտեն**

	վերաբերմունք: ➢ **Կտարբերեն** բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի հարաբերության: Խոսքում **կճանաչեն** նույնահունչ համանունները:
Ուսումնական մեթոդներ	«Բազմանիստ», «Խթանող հարցեր», «Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, քննարկի՛ր», «Հարցեր քարտարան», «Քառաբաժան»:
Ուսումնական նյութեր	«Ձուլիո» պատմվածքը, հարցերի քարտեր, նշագրիչներ, թուղթ կամ տետր:
Միջառարկայական կապ	Հայոց լեզու, մաթեմատիկա, կենսաբանություն,հասարակագիտություն;
Խաչվող հասկացություններ	Օրինաչափություն, անհատներ և հարաբերություններ պատճառ և հետևանք:
Դաս տիպը	Համակցված դաս

Դասի ընթացքը	1.Կազմակերպչական մաս(3-5 րոպե) 2.Ստուգել տնային աշխատանքները, նշել և շտկել բացթողումները: 3.Խթանող հարցերի միջոցով ամփոփել նախորդ դասը, իրականացնել կարճ հարցում, կատարել ձևավորող գնահատում: Նոր նյութի մատուցումն կազմակերպել ԽԻԿ համակարգով: Դասի խթանման փուլը սկսել բազմզնիստի կառուցմամբ:Մեթոդը լիարժեք ու արդյունավետ դարձնելու նպատակով կիրառել հետևյալ քայլերը: 1.Գրատախտակին գրել այն հիմնական միտքը, մեկնաբառը, ինչը ենթակա է ուսումնասիրության: 2.Հաջորդ քայլը՝ առանց քննարկման գրանցել մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը, այնուհետև շարունակել՝ խրախուսելով ենթագիտակցական ոլորտում ծնված ասոցիատիվ կապերը: 3.Բազմանիստը եզրափակել վերջնաբառով: 4.Հանձնարարել գտնել տրամաբանական կապ բազմանիստի մեկնաբառի և վերջնաբառի միջև(այդ բառերով կազմել բառակապակցություններ, նախադասություններ, կապակցված խոսք): 

	Իմաստի ընկալման փուլում բացատրել լեզվաքերականական նյութը՝ նույնահունչ համանուններ Կատարել վարժություններ՝ թեմայի գործնականությունն ապահովելու նպատակով: Հանձնարարել տեքստից գտնել համանուններ և ցույց տալ դրանց նշանակությունը տեքստում : Այնուհետև բաժանել քարտեր՝ հետևյալ առառադրանքներով՝ Տրված համանուններով կազմել նախադասություններ. 1.Սեր-սեր 2.Կետ-կետ 3.Տոն-տոն 4.Քանոն-քանոն Ավարտելուց հետո սովորողներին հանձնարարել կարդալ իրենց գրառումները: Կիրառելով «Մտածի՛ր, զույգ կազմի՛ր, մտքեր փոխանակի՛ր» մեթոդը սովորողներին հանձնարարել նորից կարդալ «Ջուլիո» պատմվածքը: Ընթերցման ավարտին առաջարկել զույգերից մի քանիսին ներկայացնել իրենց քննարկումների արդյունքները:
	Կշռադատման փուլում կիրառել « Քառաբաժան» մեթոդը: Հանձնարարել մտքերը համապատասխանաբար գրել քառաբաժանի չորս բաժիններից յուրաքանչյուրում: Բաժինների հանձնարարությունները համապատասխանել նյութի ընկալման ու մտքի զարգացման ընթացքին:
	Քառաբաժան <table><tr><td>1.Ի՞նչ էիք տեսնում պատմվածքը կարդալիս:</td><td>2. .Ի՞նչ էիք զգում պատմվածքը կարդալիս:</td></tr><tr><td>3.Ձեր շրջապատում հանդիպե՞լ եք Ջուլիոյի հոր նման մեկին, ի՞նչ խորհուրդ կտայիք նրան:</td><td>4.Ինչպե՞ս կվերնագրեք պատմվածքը:</td></tr></table>

Տնային աշխատանք	
Անդրադարձ	

Դասի պլան 3

Դասարանը	7-րդ-
Առարկան	Հայոց լեզու
Դասի տևողությունը	45 րոպե
Դասի թեման	Ածական անուն
Նպատակը	➢ **Խորացնել, ընդլայնել** ածականի մասին նախկին գիտելիքները, **ձևավորել** ստացած գիտելիքը կիրառելու կարողություն, **հարստացնել** բառապաշարը: ➢ **Ձևավորել** գեղագիտական ճաշակ, մտապատկերման և գեղարվեստական խոսք կազմելու կարողություններ:
Խնդիրները	➢ Տեքստից գտնել ածականներ, կազմել բառակապակցություններ, նշել ածականների դերը:
Վերջնարդյունքները	➢ Սովորողները ընդհանուր գաղափար **կունենան** ածականի արտահայտած ընդհանուր իմաստի, ձևաբանական առանձնահատկությունների մասին: ➢ **Կտարբերեն** ածականը այլ խոսքի մասերից: ➢ **Կկիրառեն** ածականը գրավոր և բանավոր խոսքում:
Ուսումնական մեթոդներ	Մտագրոհ, ՓԳՀ-ով ընդհանուր հարց ու պատասխան, , ճանաչողական և կիրառական առաջադրանքներ, ելքի քարտ:
Ուսումնական նյութեր	Դասագիրք, տետր, գրատախտակ, տեսասահիկ:
Միջառարկայական կապ	Գրականություն, աշխարհագրություն
Խաչվող հասկացություններ	Կայունություն և փոփոխություն
Դասի տիպը	Հաղորդման դաս

Դասի ընթացքը	Կազմակերպչական մաս (3-5 րոպե) Խթանման փուլում գրատախտակին գրել մի քանի բառակապակցություն, այնուհետև սովորողներին առաջարկել ընդգծել գոյականները, ապա հարցնել, թե որ բառերն են լրացնում գոյականներին և ինչ դեր են կատարում: Սովորողների նախնական գիտելիքները հայտորոշելուց հետո անցնել իմաստի ընկալման փուլին: Իմաստի ընկալման փուլում սովորողներին հանձնարարել կարդալ դասագրքի նյութը և ՓԳՀ-ով գրառումներ կատարել տետրում: Այս մեթոդի օգնությամբ սովորողները կարդալիս անում են գրառումներ հետևյալ փոխգործուն նշաններով. V - գիտեմ + - նոր տեղեկություն է _ - իմ իմացածին հակասում է ? -անհասկանալի է, շփոթեցնող է I – հետաքրքիր է, կարելի է քննարկել Ընթերցումն ավարտելուց հետո սովորողներն իրենց ստացած տեղեկությունը դասակարգելու նպատակով կազմում են կատարված նշումների իրենց անհատական աղյուսակը հետևյալ ձևով.
Տնային աշխատանք Անդրադարձ	<table><tr><td>v</td><td>+</td><td>-</td><td>?</td><td>i</td></tr><tr><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr></table> Աշխատանքի ավարտից հետո հանձնարարել կարդալ իրենց գրառումները և կատարել քննարկում: Ամփոփել սովորողների քննարկումները և մտքերը «Աճական անուն» թեմային վերաբերող սահիկաշարով:

	Կշռադատման փուլում օգտագործել ելքի քարտ ԵԼՔԻ ՔԱՐՏ Նշի՛ր երկու բան , որ սովորեցիր այսօր: Նշի՛ր երկու բան, որ հետաքրքրեց քեզ: Նշի՛ր մեկ բան , որ մնաց անհասկանալի: